2126.7/2077

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«04» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0047-21

Ձեռնարկողը՝ ***«Մարիամ Գարիկ» ՍՊԸ***
Գեղարքունիքի մարզ գ. Գեղհովիտ 3-րդ փող. փ. 29

Գործունեությունը՝ ***Մարտունու բազալտների հանքավայրում*** (2B և 3C1) ***բլոկների հանքարդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0047-21

« 04 » 03 2021թ.

Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտների հանքավայրում կատարվելիք աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնակող՝	«Մարիամ Գարիկ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն՝ կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	/Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Գեղհովիտ համայնք

Ներածական մաս. «Մարիամ-Գարիկ» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է Մարտունու բազալտների հանքավայրի (2B և 3C1 բլոկ) արդյունահանման աշխատանքներ, որի նախագիծը մշակվել է Ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Մարտունու բազալտների հանքավայրի /2B ԵՎ 3C1 բլոկ/ արդյունահանումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Ընկերության կողմից նախագծված հանքավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի վարչական սահմաններում, համայնքից 2կմ հարավ-արևմուտք, Մարտունի քաղաքից 5.0կմ դեպի հարավ-արևմուտք, իսկ Վերին Գետաշեն համայնքից 4կմ հարավ-արևելք հեռավորությունների վրա :

Հանքավայրի բացարձակ նիշերը տատանվում են 2140մ-ից մինչև 2190մ-ի սահմաններում: Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 29.04.1967թ.-ի N162 արձանագրությամբ 1967թվականի հունվարի 1-ի դրությամբ, ըստ A, B և C_1 կարգերի

համապատասխանաբար՝ 845.0հազ.մ^3, 2687.0հազ.մ^3 և 3005.0հազ.մ^3 քանակներով: Բլոկի ելքը լեռնային ապարներից կազմում է 34%:

Օգտակար հանածոն պիտանի է օգտագործելու որպես հումք՝ երեսպատման քարերի, շինարարական քարի արտադրության և այլ արտադրանքի ստացման համար: Ընկերության կողմից նախատեսվում է հաստատված պաշարների եզրագծից, Մարտունու բազալտների հանքավայրի 2B և 3C1 բլոկներից արդյունահանել օգտակար հանածոն: Նախագծված բացահանքի դաշտի օտարման տարածքը կազմում է 2,25հա: Բացահանքի տարեկան արտադրողականությունը հաշվարկված է ըստ մարվող պաշարի 6150մ^3, իսկ կորզվող պաշարների քանակը 5625մ^3: Բացահանքի ծառայման ժամկետը ընդունված է 50 տարի: Նախագծված բացահանքի ծայրակետերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են՝

1. X=4439287 Y=8522875
2. X=4439193 Y=8522935
3. X=4439173 Y=8523051
4. X=4439034 Y=8523081
5. X=4439146 Y=8522857

Հանքավայրը ծածկող երեսաշերտի ապարներն են հողաբուսական շերտը և ալյուվիալ-դելյուվիալ բերվածքները (որոնք ներկայացված են գլաքարավազային, գլաքարային, ավազակավային նյութերով և ջարդոտված հողմնահարված բազալտների կտորներով), դրանց միջին հզորությունները կազմում է համապատասխանաբար 0.5մ և 1.11մ: Մակաբացման ապարների միջին հզորությունը կազմելով 1.61մ: Պայմանավորված ապարների բարձր ջրաթափանցելիությամբ բացահանք ներթափանցող մթնոլորտային տեղումները կենթարկվեն բնական դրենաժի:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով, հորատասեպային եղանակով:

Բացահանքի շահագործման ընթացքում տեղի են ունենում օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ (նախագծային կորուստներ), որոնք բաժանվում են երեք խմբերի.

- Կորուստներ, որոնք պայմանավորված են հանքավայրի լեռնատեխնիկական և շրջակա միջավայրի պայմաններով: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են ընդերքում՝ թողնվում են բացահանքի կողերում հանքաստիճանների եզրերի թույլատրելի թեքությունն ապահովելու համար (14300 մ^3 կամ 4.65 %):

-Կորուստներ, որոնք մնում են բացահանքի հատակում: Այդ կորուստները կազմում են՝ 11610մ^3 (3.78%):

- Կորուստներ, որոնք մնում են թեք խրամի տակ 340 մ^3 (0.11%):

Ընդամենը կորուստները կկազմեն՝ 26250 մ^3 (8.54%):

Հանքավայրի բացումը կատարվելու է նրա արևելյան մասի՝2173.0մ բարձրության նիշից: Նախատեսված է ավտոճանապարհի կառուցում հանքավայրի հարավ արևմտյան կողմից, նրա 2150.5մ բարձրության նիշից մինչև բացահանքի 2173.0մ բարձրության հորիզոն: Ավտոճանապարհի երկարությունն է՝ 293.0մ, 8մ լայնությամբ: Որից հետո աստիճանաբար կտրտվելով ավտոճանապարհը կսպասարկի հաջորդ՝ 2170.5մ–ից մինչև 2153.0մ բարձրության հորիզոնը, այնուհետև կտրող ներքին կիսախրամով կիջնի 2150.5մ բարձրության հորիզոնը: Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝

02543163
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- հանքաստիճանի բարձրությունը – 2.5մ,
- անվտանգության բերմայի լայնությունը – 1.0մ,
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը – 90^0,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 18-20մ:

Մակաբացման ապարների քանակը բացահանքում կազմում է 36200մ^3, որից 11200մ^3-ը մակաբացման ապարներն են, իսկ 25000մ^3 ալյուվիալ-դելյուվիալ բերվածքները, նախատեսվում է ավտոինքնաթափով տեղափոխել լցակույտ և տեղավորել բացահանքի հարավ արևմտյան մասում ձևավորվող ժամանակավոր լցակույտ, առանձին՝ համապատասխանաբար N1 և N2 լցակույտերով: Մակաբացման աշխատանքները նախատեսված է կատարել բուլդոզերի օգնությամբ: Շահագործման տարիներին տվյալ հանքաստիճանը կամ նրա մի մասը մինչև հատակը շահագործվելու դեպքերում՝ շահագործմանը զուգընթաց մոտակայքի մակաբացման ապարները անհրաժեշտ քանակությամբ կլցվեն բացված հատակների վրա (2153.0մ, 2150.5մ բարձրության բացահանքի արևելյան մասը) 1.94մ բարձրությամբ և կհարթեցվի, կկատարվի ներքին լցակույտաառաջացում:

Բլոկների արդյունահանումն իրականացվելու է հիմնականում հորատասեպային եղանակով: Բլոկների բարձումը ավտոինքնաթափի մեջ, ինչպես նաև նրանց բեռնաթափումը կատարվելու է 16տ բեռնամբարձությամբ ավտոկռունկի միջոցով:

Կուտակված արտադրական թափոնների, մակաբացման ապարների բարձումը ավտոինքնաթափերի մեջ կատարվելու է էքսկավատորով:

Հանքարդյունահանման աշխատանքները սկսելիս ծածկող ապարների շերտը, բուլդոզերով հավաքվելու է, և ավտոինքնաթափով տեղափոխվելու է բացահանքի հարավ արևմտյան մասը՝ ժամանակավոր լցակույտ և պահեստավորվելու է (N1 և N2 լցակույտեր): N1 լցակույտը հողաբուսական շերտի լցակույտն է, իսկ N2-ը ալյուվիալ-դելյուվիալ առաջացումների լցակույտն է՝ գլաքարավազային, գլաքարային, ավազակավային նյութերով և ջարդոտված հողմնահարված բազալտների կտորներով: Տեղափոխման հեռավորությունը կազմում է մինչև 0.5կմ, դեպի բացահանքի հարավ արևմտյան մասը ձևավորվող լցակույտը:

Շահագործման 49-րդ տարվանից սկսած N1 ժամանակավոր լցակույտի մակաբացման ապարները, աստիճանաբար կտեղափոխվեն և կլցվեն արդեն արդյունահանված 2186.5մ 2184.0մ, 2181.5մ բարձրության հորիզոնների վրա 1.94մ հզորությամբ և կհարթեցվեն: Կստեղծվի ներքին լցակույտեր: Մինչև շահագործման ավարտը կկատարվի 33300մ^3 ծավալի տեղափոխում և հարթեցում: 2900մ^3 ծավալը կբերվի և կկուտակվի բացահանքի արդյունահանված տարածքի վրա ստեղծված ներքին լցակույտի վրա:

Շահագործման ավարտից հետո իրականացվելու է խախտված հողերի վերականգնում: Լցակույտում մնացած 2900մ^3 ծավալը, կտեղափոխվի 2150.5մ բարձրության հանքաստիճանի վրա կլցվի 1.94մ բարձրությամբ և կհարթեցվի: Կհարթեցվի նաև նախկին լցակույտի զբաղեցրած մակերեսը:

Լցակույտի միջին բարձրությունն է 7.5մ, որի թեքության a= 35^0-ի դեպքում՝ զբաղեցրած վերին և ստորին մակերեսները համապատասխանաբար կազմում են՝ 5520մ^2 և 7880մ^2 մակերես: Նախագծով ընդունված բուլդոզերը և էքսկավատորը կարելի է օգտագործել լցակույտառաջացման ժամանակ:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր են հանդիսանում բացահանքը, տեխնիկական և տրանսպորտային միջոցները, լցակույտը: Համաձայն հաշվարկների արդյունքների

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
РА ВЕРЕВАН ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ ГНО
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

արտանետվող նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները /հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները/, չեն գերազանցում սահմանված ՍԹԿ-ները:

Բացահանքի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակին,
- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահով ձայնախլացուցիչ սարքավորումով՝ աղմուկի մակարդակի նվազեցման նպատակով,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա զտիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում են հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսյուղերի հավաքում առանձին տարրաների մեջ,
- հնամաշ մեխանիզմների դետալների ու մասերի կուտակում և հանձնում են, որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային կեղտաջրերի հեռացում բիոզուգարանի միջոցով, որը կտեղադրվի արտադրական հրապարակում,
- խախտված տարածքների վերականգնում /ռեկուլտիվացիա/:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումն իրականացվելու է բացահանքի շահագործման ավարտից հետո: Հարթեցումը կատարվելու է բուլդոզերի օգնությամբ:

Հարթեցումը կկատարվի բացահանքերի ողջ մակերեսով՝ 18480մ^2, արտադրական հրապարակը՝ 250մ^2, ավտոճանապարհները՝ 1500մ^2, ինչպես նաև նախկինում տեղադրված արտաքին լցակույտի մակերեսը՝ 7880մ^2: Ընդհանուր մակերեսը կկազմի՝28110 մ^2:

Բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական վերականգնման համար նախատեսված է 1940,6հազ ՀՀ դրամ:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողի ծածկույթը, կենսաբանական միջավայրը: Մշտադիտարկումների իրականացման տարեկան ծախսը կկազմի 150.0 հազ. ՀՀ դրամ:

Բացահանքի աշխատանքային գործընթացում կներգրավվի համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին: Ֆինանսական աջակցություններ կցուցաբերվեն համայնքի դպրոցներին, մանկապարտեզին և իրականացվելիք ծրագրերին:

Պատճառաբանական մաս. Գեղհովիտ համայնքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, Գեղարքունիքի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված նորմերի կատարումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մարիամ-Գարիկ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Մարտունու բազալտների հանքավայրի /2B և 3C1 բլոկ/ օգտակար հանածոյի արդյունահանման

աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան